

ՍՈՎԱՐՈՒԹԻՒՆ

Չինաց կայսերաց անցուցած առօրեայ
կեանքը :

Հետեւալ տեղեկութիւնս գաղղիա
կան օրագրի մը մէջ կը կարդանք :

Չինաց կայսերաց վիճակը անանկ
անտանելի է, որ թէպէտ Արկնային
Լայսերութեան գլուխը միահեծան տէր
է երկրին և բացարձակ իշխանութիւն
ունի իր հապատակներուն վրայ, սակայն
քան զամէն մարդ աւելի գերի է ինքը
այն անհամար կապերուն պատճառաւ՝
որոնցմով պարաւանդեալ է իր բարձր
աստիճանաւը : ՚Ի, ախ առաւտեան քը-
նոյն անուշութեան համը ոչ երբէք
կ'առնէ կայսրը . ժամը չորսէն առաջ՝
ներքինի մը զարթուցիչ ժամացոյցի պէս
կու գայ կանթեղով մը քունէն կ'ար-
թընցընէ զինքը . ետքը ծառաները կու
գան թէյով : Հագուելէն ու թէյը խը-
մելէն վերջը, կայսրը իրեն ներքնասե-
նեակը կ'երթայ, ուր թղթերու դէզ
մը բարձրացած կը գտնէ : Պէտք է որ
անոնց ամէնը աչքէ անցընէ, և իր հա-
ւանութիւնը կամ տհաճութիւնը ցու-
ցընէ՝ թուղթը ծալելով կամ եղնգով
գիծ մը քաշելով անոր վրայ . իր ներքին
խորհրդականները գրի վրայ կ'առնեն
մէկէն իր կամքն ու իր ակնարկութիւր :

Ռյո միջոցիս, թէպէտ հազիւ կա-
տարեալ առաւտ եղած կ'ըլլայ, գա-
հոյից սրահը կը լեցուի մանտարիննե-
րով . երբոր կայսրը կու գայ հոն, բոլոր
առաջիկայ եղողները իրեք անգամ կը
չոքին ու զլուխնին գետին կը զարնեն :
Ինքնակալը ամենուն հետ պէտք է խօ-
սի, կամ ուղղակի՝ երբոր նշանաւոր անձ
մըն է դիմացինը, և կամ իր դռնապան-
ներուն ձեռքով՝ որոնք բարձր ձայնիւ
հարցմունքներն ու պատասխանները կը
հազորդեն, երբոր աւելի ստորին կար-
գի անձինք են : Շատ անգամ կը հան-
դիպի որ այս խօսակցութեան միջոցը
երկար կը տեւէ . որովհետեւ այս ժամուն

որոշուած է որ գան նոր հաստատուած
մանտարիններն իրենց չնորհակալու-
թիւնը յայտնելու, և երեսէ ինկած
մանտարիններն ալ գան ծանուցանեն
որ արժանաւոր էին այն պատժոյն՝ զոր
կայսրը տուեր է իրենց, և իմացընեն
միանգամայն որ ամենեւին ոխ պահած-
չեն այս բանիս վրայ և հաւատարիմ
հպատակք են :

Ժամը եօթնին կայսրը կ'առանձնա-
նայ նախաճաշն ընելու համար . և ո-
րովհետեւ ոչ ոք կը գտնուի իրեն հաւա-
սար, անոր համար ոչ ոք երբէք սեղա-
նակից կ'ըլլայ իրեն : Ինչպէս որ քնոյ
կողմանէ ազատ չէ, այսպէս է նաև կե-
րակրոյ կողմանէ ալ . ոչ եթէ իր ուզած
ու ախորժած կերակուրները կը բե-
րուին սեղան, հապա օրինաց սահմա-
նածները, որ ըստ եղանակաց կը զանա-
զանին . ժամանակէ առաջ արուեստով
հասունցած պտուղներն ու կանաչեղին-
ները բացարձակապէս արգիլուած են
իրեն . նոյնպէս անոնց երախայրիքը ոչ
երբէք կայսերական պալատը կրնան
մոնալ : Ռյո նախաճաշէն ետքը՝ կայս-
րը երկու ժամազատ է, և այս միջոցիս
մէջ թէ որ ուզէ կրնայ քնանալ, կամ
պարապ կենալ : Հետոյ նորէն կը դառ-
նայ իր ներքնասենեակը, և տէրութե-
այլ և այլ պաշտամանցը մէջ մաս ունե-
ցող մանտարիններ պատրաստ են իր
հարցմունքներուն պատասխան տալու
և հարկաւոր եղած տեղեկութիւններն
հազորդելու իրեն : Ռյո աշխատութե-
ժամերուն մէջ մի միայն ազատութիւն
ունի նէ կայսրը այս է՝ որ կրնայ երբեմն
երբեմն թէյ մը խմել :

Ինչ խստութեամբ որ որոշուած է
նախաճաշն կերակրոյ ցանկը, նոյնպէս
բռնադատեալ է կայսրը ձաշի ժամա-
նակ իր առջեւը դրուած կերակուրներն
ու տելու : Ռաշէն վերջը քիչ մը ատեն
զրւարձանալ թոյլտրուած է իրեն . կը ը-
նայ երթալիր պարտէզներուն մէջ քա-
լել, կամ իր ընտանեաց քովն սփոփիլ :
Ռայց անոնց նախընթրիք ըրած միջո-
ցը, պիտի յանձն առնէ ներկայ ըլլալ
միայն և կայսերական գերդաստանին

իշխանազանց իրարու պտուղներ կամ ուրիշ ո և իցէ ուտելիք ընծայելը տեսնալ, առանց ամեննեին անոնց դպչելու : Երիկուան՝ երբոր արեգակը կը մտնէ, կայսրն ալ, որ անոր հաւասար կը սեպուի, ուզէ չուզէ պէտք է անկողին մտնայ :

Այս է ահաւասիկ Ամինաց կայսեր ամենօրեայ անցուցած կեանքն ու ըրած սովորական շրջանը, 'ի բաց առեալ տօներու սակաւաթիւ օրերը . և սակայն անոնք ալ աւելի ծառայութեան օրեր են իրեն համար՝ քան թէ ազատութեան, որովհետեւ հանդէսներու ժամանակ նոր նոր պարագեր կ'աւելնան իր վրայ : Իւելի ցաւալին այն է՝ որ և ոչ ձամբորդութիւն մը, թէ և փոքրիկ, կրնայ ընել . որովհետեւ Ամինք կը համարին թէ կայսրը իր պալատին մէջ կեցած միջոցը, որ աշխարհին կեղրոնը կը սեպուի, Երկնային Լայսերութեան հոգին է, և չորս դին հաւասարապէս կը բաշխէ ու կը հասցընէ իր ամենակարեւոր ազգեցութիւնը . որով իրեն արգիլուած է տեղէն շարժիլը, որպէս զի ըըլայ որ գաւառ մը զրկուի այս շնորհբին սովորական չափէն :

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Մագդաղինէ : (Տես էջ 19)

Բ

“Այն իրիկունը, նոյն ժամուն, տը Ալզրավէր ծեր ասպետը գաւթին մէջ նստած էր, և իրեն ընկերութիւն կ'ընէր Ֆրէզնը պառաւ մարգիզուհին, որուն մերձաւոր դղեակը հովտին խորը կ'երեւար Այն գետին ափանցը վրայ բարձրացող կաղամախեաց դեռ կանաչ տերեններուն մէջէն : Այս երկուքը ախորժանաօք կը խօսակցէին իրարու հետ անցեալ ժամանակներու վրայ, որովհետեւ իրենց տարիքին՝ կեանքն ուրիշ բանով լուսաւորուած չէ, բայց եթէ այն

տժգոյն և քաղցր ցոլացմամբ՝ որ յիշատակ կը կոչուի :

Ո՞արգիզուհոյն և ասպետին իրարու հետ ունեցած մտերմութիւնը շատոնցուան բան էր : Ուագաւորութեան դէմ ելած առաջին աղմուկներուն միջոցը, Ֆրէզնը մարգիզը պատշաճ սեպեց իր կնողն հետ մէկտեղ երթալու քանի մը ամիս ձամբորդութիւն մը ընելու հուենոսի ափանց վրայ, բողոք մը համարելով իր այս ձանապարհորդութիւնը Պաղղիոյ մէջ հանդիպած գործոց դէմ, և վաւերական վկայութիւն մը մեծարանաց և սիրոյ առ աթուն Արքոյն Լուգովիկոսի . և Ա ալզրավէր ասպետն ալ ուզեց ընկերակից ըլլալ անոնց : Յայտնի է ամենուն թէ ինչ վերջ ունեցան նոյն ատենները այս քանի մը ամսուան ձամբորդութիւնները, և թէ ինչպէս մեծաւ մասամբ զբօսանքէ երկար և դառն աքսորանքի մը փոխուեցան : Այն իրեք ձանապարհորդները անանկ հաստատութեամբ մտքերնին դրած էին շուտով դառնալու, որ հազիւ տարուան մը ծախքերու համար հարկաւոր եղած դրամն առած էին հետերնին : Երբոր անիկայ լմբնաւ, երբոր իրենց ագամանդները ծախեցին և զարդերն ստակ ըրին, անձանօթ երեսօք Երկեմպէրկ գացին, և աղքատաբար զետեղուեցան հոն, և ապրելու ձարերնին հոգալու վիճակի մէջ ինկան : Տը Ֆրէզնը և տը Ա ալզրավէր պարոնները վշտացեր և վչատեր էին այս դէպքէն : Աակայն, ինչպէս որ միշտ ասանկ կը հանդիպի, կինն օրինակ տոււաւ անոնց համակամութե, քաջարտութեան և անվեհեր գործունէութեան : Երբոր երկու բարեկամներն անձկութեամբ կը հարցընէին իրեն թէ ինչ ձամբայ պէտք էին բռնել . “Աշխատինք, աշխատինք,, պատասխանեց կինն անխուով կերպարանքով : Կապարանկարի և կիտուածանկարի մէջ ձարտար ըլլալով ինքը, սկսաւ գաստալ և դէմքեր նկարել . և իր թշուա-